ԻՐԱԶԵԿՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Հարգելի հարկ վճարող

Իրազեկման կարգով հայտնում եմ, որ Ֆիզիկական անձանց եկամուտների հայտարարագրման գործընթացի շրջանակներում 2024 թվականի հաշվետու տարվա հայտարարագրի ներկայացման վերջնաժամկետ է սահմանված 2025 թվականի նոյեմբերի 1-ը ներառյալ:

Աշխատակիցներին տեղեկացնելու և իրազեկման հանդիպումներին մասնակից դարձնելու նպատակով՝ հայտնում եմ, որ Պետական եկամուտների կոմիտեն իրականացնում է իրազեկման աշխատանքներ՝ ստորև ներկայացված ուղղություններով.

- Սեպտեմբերի 10-ից մեկնարկվել է ֆիզիկական անձանց եկամուտների տարեկան հայտարարագրման վերաբերյալ իրազեկումների նոր փուլը՝ սեպտեմբեր ամսվա ընթացքում իրազեկման հերթական հանդիպումները նախատեսված է կազմակերպել Երևանում սեպտեմբերի 10-ին, 12-ին, 17-ին, 19-ին, 24-ին և 26-ին, ժամը՝ 16:00-ին՝ Կոմիտաս 35 հասցեում: Հանդիպման ընթացքում մանրամասն կներկայացվեն ֆիզիկական անձանց եկամուտների տարեկան հայտարարագրերի ներկայացման հետ կապված անհրաժեշտ գործողություններն ու քայլերը: Ի դեպ, հանդիպման համար նախատեսված դահլիճը կահավորված կլինի անհրաժեշտ տեխնիկական միջոցներով, այդ թվում՝ համակարգիչներով, և այն քաղաքացիները, որոնք ունեն բջջային նույնականացման քարտեր (miD), հնարավորություն կունենան, իրազեկմանը զուգահեռ, լրացնել և հանձնել եկամուտների տարեկան հայտարարագիրը: Ցանկության դեպքում պետք է նամակ ուղարկել HVSV20@taxservice.am էլեկտրոնային հասցեին՝ նշելով անուն ազգանունը,ՀԾՀ-ն,էլեկտրոնային հասցեն և հեռախոսահամարը;

- իրազեկման միջոցառումներին առկա ձևաչափով մասնակցելու համար 50 և ավելի աշխատակից ունեցող կազմակերպությունները պետք է նամակ ուղարկեն HVSV3@taxservice.am էլեկտրոնային հասցեին՝ նշելով կազմակերպության անվանումը, հասցեն և կոնտակտային անձի տվյալները:
- Առցանց ձևաչափով մասնակցելու համար կազմակերպության անվանումն ու կոնտակտային անձի տվյալները պետք է ուղարկել HVSV6@taxservice.am էլեկտրոնային հասցեին :
- Քաղաքացիներն, ովքեր ցանկանում են մասնակցել իրազեկման հանդիպումներին Երևանում (ՊԵԿ ուսումնական դահլիճում՝ Ահարոնյան 12/3) կամ մարզերում, կարող են նամակ ուղարկել HVSV14@taxservice.am էլ. հասցեին՝ նշելով մասնակիցների տվյալներն ու ցանկալի վայրը:

Հարցերի դեպքում քաղաքացիները նաև կարող են դիմել ՊԵԿ հարկ վճարողների սպասարկման վարչության ցանկացած սպասարկման բաժին՝ երկուշաբթիից ուրբաթ՝ 09:00-ից 18:00-ն (առանց ընդմիջման):